

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

## ՀԱՂՅՐ, ՀԱՅԵՐԷՆ ՍՈՐՎԵՑՈՒՐ...

Հա՛յր, հայերէ՛ն սորվեցուր սա մանուկին հայկազուն՝  
Արհեստիդ հետ առօրեայ եւ գիշերուան աղօթքին,  
Հայրերդ ինչպէս զայն քեզի՝ սորվեցուցին օր մը հին,  
Որ, օր մը նոր՝ քո՛ւ կարգիդ՝ զայն կտակես քու տղուն:

Հա՛յր, հայերէ՛ն սերմանէ վաղորդայնիդ քու սիրոյն՝  
Իբր յուռթի հերկ, բարի գործ, նա՛եւ իբրեւ պարտք սրբին,  
Որ չար հովին դէմ գիտնա՛յ տոկալ, անիլ քու որդին,  
Իր կեանքն ապրի հա՛յօրէն ու երջանիկ ու բեղուն...

Զի Հայ Լեզուն միակ լա՛ստն է Հայութեան տարագիր,  
Ուր կարենա՛յ կառչիլ Հայն՝ իր յաւերժին ի խնդիր,  
Հայրենի՛ք է ոգեղէն՝ հայրենիքին քով հողէ...

Տղուդ բերրի միտքին մէջ, հա՛յր, անհաշիւ դուն ցանէ՛  
Հայ բառերու լոյս հունտեր՝ Ապագայի իբրեւ ծառ,  
Որուն շուփին կարենա՛ս փակել աչքերդ հեշտաբար...

## Ո՛Վ ՀԱՅ, ԽՕՍԷ՛ ՀԱՅԵՐԷՆ...

Ո՛Վ Հայ, խօսէ՛ հայերէն շէկ զարթօնքի միջեւ քուն.  
Բազմութեան մէջ թէ միմակ, տան թէ նամբուն շուկայի,  
Օտարին հետ ու եղբորդ, իբրեւ յաղթերգ պանծալի,  
Հպարտութեա՛մբ, բարձրաճա՛յն լոկ հայերէն խօսէ դուն:

Կանաչ բակէն դպրոցի միջեւ մահիճն յետնագոյն՝  
Խօսքդ ըլլայ մի՛շտ հայերէն, զի մէն մի բառն հայրենի՛  
Օղակ մ'է նոր ու հօր, որմով տակաւ կ'երկարի  
Հայ լեզուին հին, բայց անմաշ շղթան ոսկի եւ անհուն...

Բերանացի, գրաւոր, ու մտովին, հոգեւին՝  
Միշտ հայերէ՛ն խօսէ դուն՝ ի սէ՛ր մեր մեծ Անցեալին,  
Որ իր հողին տակ ննջող մեր ողջ նախնիքը ցնծան:

Թէ հա՛րկ ըլլայ Աստուծոյ հետ ալ խօսիլ անպայման,  
Հպա՛րտօրէն, ոսկրերովդ ու շրթներովդ հողածոյ  
Խօսէ դա՛րձեալ հայերէն՝ այդ սուրբ լեզուն Աստուծոյ...

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ